ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 դեկտեմբերի 2013թ. թիվ 321-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. հոկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» N 624 որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետի «ե» ենթակետը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.13 կետի «դ» ենթակետով և հաշվի առնելով Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության աշխատակիցների 17.10.2013թ. պլանային ստուգման թիվ 25 արձանագրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

Սպիտակի քաղաքապետին տալ պարտադիր կատարման ցուցում՝

Շինարարության թույլտվությունները և ավարտական ակտերը սահմանված ժամկետներում ներկայացնել Լոռու մարզպետարան:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. դեկտեմբերի 12
ք.Վանաձոր